# ԼԱՅՄԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

**Ավագյան Գ.Ա., Խաչատրյան Է.Ա., Սահակյան Ա.Ե., Սարգսյան Ռ.Տ., Կոճոյան Գ.Գ., Եղոյան Կ.Ն., Ալեքսանյան Ա.Մ, Ավետիսյան Ա.Ե., Կարապետյան Ա.Գ., Մանվելյան Հ.Մ.**

Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի նևրոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

*Լայմի հիվանդությունը տզերի միջոցով տարածվող ինֆեկցիոն հիվանդություն է: Լայմի հիվանդությունը մեծ տարածվածություն և բացահայտում ունի երկրագնդի հյուսիսային կիսագնդում, ընդ որում, հիվանդության տարածվածությունը կախված է տարածքի աշխարհագրական դիրքից և կլիմայից: Մասնավորապես, ԱՄՆ-ի հիվանդության հսկման և կանխարգելման կենտրոնի տվյալների համաձայն, միայն ԱՄՆ-ում տարեկան գրանցվում է 200 000 նոր դեպք: Վերջին տարիների ընթացքում, Արևմտյան Եվրոպայի երկրներում (Գերմանիա, Շվեցարիա, Ավստրիա, Լեհաստան, Չեխիա և հյուսիսային Իտալիա) նկատվել է տվյալ հիվանդության թե՛ դեպքերի քանակության, և թե՛ տարածվածության մեծացում:*

*Հյուսիսային Ամերիկայում, Լայմի հիվանդության հարուցիչը հանդիսանում Borrelia burgdorferi-ը, իսկ Եվրոպայում՝ Borrelia garinii և Borrelia afzelii -ը: Հիվանդությունը մարդուն փոխանցվում է վարակված՝ Ixodes scapularis (Հյուսիսային Ամերիկայում) և Ixodes ricinus տզերի (Եվրոպայում) խայթման միջոցով: Լայմի հիվանդության հարուցիչների բնական կրողներ են հանդիսանում՝ սպիտակապոչ եղջերուն, կրծողները, շները, ոչխարները, թռչունները, խոշոր եղջրավոր անասունները:*

*Ամբողջ աշխարհում մշակվել և հաջողությամբ կիրառվում են Լայմի հիվանդության ախտորոշման և բուժման հստակ չափանիշներ: Համաձայն Երևանի պետական բժշկական համալսարանի նևրոլոգիայի բաժնում գրանցված Լայմի հիվանդության մի քանի կլինիկական և կիրառական դեպքերի վավերացման, կարելի է պնդել, որ Հայաստանը, ինչպես նաև տարածաշրջանի ցանկացած այլ երկիր, կարող է հանդիսանալ համաճարակի գոտի, քանի որ 2010թ. հեղինակների կողմից Հայաստանում վեց պացիենտների մոտ հաստատվել է հիվանդության ախտորոշում և ունեցել է կլինիկորեն հիմնավորված ենթադրություն՝ Լայմի հիվանդության առկայության մասին, ինչն ապացուցում է մեր տարածաշրջանում հիվանդության առկայությանը:*

*Այսպիսով, ժամանակին ախտորոշման և նպատակաուղղված բուժում նշանակելու նպատակով, արդարացված է հանդիսանում բուժաշխատողներին այս հիվանդության հիմնական ախտանիշների ուսուցման և գիտելիքների հետագա ավելացման անհրաժեշտությունը:*

*Մեր հանրապետությունում Լայմի հիվանդության մասին տեղեկատվական իրազեկության առավելագույն տարածումը հնարավորություն կընձեռի ստեղծելու ազգային ծրագիր՝ բնական աղբյուրների, կրողների բացահայտման, հիվանդությանը բնորոշ կլինիկական նկարագրի ու ամենօրյա պրակտիկայում ախտորոշման չափանիշների և արդյունավետ բուժման համար:*

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY